ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 171-Ա

10 մարտի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԱՂՎԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԻՆԵ ՂՈՒՄԱՇՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 220-րդ, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կարեն Զազյանի 2026 թվականի փետրվարի 17-ի Ն/588-2026 զեկուցագիրը, ինչպես նաև Արմինե Ղումաշյանի գրավոր բացատրությունը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի Աղվան Եղիազարյանի անվան Հ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Ղումաշյանի նկատմամբ, աշխատանքային պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, այն է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշման N 1 հավելվածի «Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրեր» բաժնի 4-րդ գլխի 1-ին կետի 13-րդ ենթակետի, 11-րդ գլխի 1-ին կետի

8-րդ, 14-րդ ենթակետերի, 14-րդ գլխի 1-ին կետի 2-րդ ենթակետի «ժ» պարբերության, 3-րդ հավելվածի 2-րդ գլխի 1-ին կետի 5-րդ ենթակետի, 7-րդ ենթակետի, 1-ին գլխի 1-ին կետի 17-րդ ենթակետի, 36-րդ ենթակետի պահանջների խախտման հանգամանքով պայմանավորված, կիրառել «Նկատողություն» կարգապահական տույժը:

10.03.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710[illegible]503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ